

ԱՐՄԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՈՆԱԿԱՆ, ՊԵՏՐԵԱՆ, ԲԵՆԵՔԵՐԵԿԱՆ, ԲԵՐԱՎԵԿԻ ԵՒ ԱԶԴԵՑԻ.

ԹԻՒ ԺՈՒ. — ԵՐԱԱՆ Ը.

1875

ՏԱՐԻ Ը. — ՆՈՅԵՄԲԵՐ 50

ԿՐՈՆԱԿԱՆ

ԿՐՈՆԱԿԱՆ ԵՒ ԱՅԼ ԶԵՂՖՄԵՆՑ
ՎՏԱՆԳՄԲԵՐ ՀԵՏԵՒԵՆԵՑ ՎԵՐԱ

ՄԻ Գ. Ե Վ Փ Ե Բ Ե Ւ Տ Ե Ս .

(Ուշեալ Շուշ ճանշակ)

ՄԵՃՆ ՆԵՐԱԽԻՒ, ՍԱՀԱԿ ՊԱՐԺԵԿԻ, Ս. ՄԵԿՐՈՎԲԱՅ, Եւ ՀԵՄՊՀԵՄԵ ՉԱՐՈՒՆԱԿ ՆՈԴԱՆՄԱՆ ԵՌԱՆՈՒԹՈՒՆ՝ մԵԾԱԳՈՐԾ Եւ աՆՃՆԱՆՈՒԵՐ ՀԱյրապետաց՝ Եւ ՆՈԳԱ պաշտպան Եւ աջակից թէ Եկեղեցական Եւ թէ աշխարհական համայն անձանց ամեն ժամանակ Եւ գարում՝ ի սէր Ազգի Եւ Եկեղեցւոյ ի գործ գրած բարենպատակ գործոց Եւ արդեանց մէջ պարզապէս երկու նպատակ կերեւի: Մինն է Ազգի Եւ Եկեղեցւոյ գոյութեան յարատեւութիւնը ապահովել, Եւ միւսն է բատկարեւորութեանն Եւ կարօտութեան Եկեղեցւոյ Եւ Ազգի: Ինչպէս նաեւ ըստ պահանջմանց ժամանակին՝ կարգ Եւ կանոններ, այլեւայլ պետոյից Եւ կարգաց համաձայն սահմաններ, Եւ արագողութեանց Եւ պաշտամանց մէջ միշ-

րինակութիւն, ներգաշնակութիւն Եւ պայծառութիւն, միանգամայն յառաջադիմական ամեն կարելի Եւ անհրաժեշտ տնօրէնութիւնքը խորհել՝ կազմել Եւ հաստատել:

Առաջին նպատակ թէպէտ քաղաքական անկախութիւն Եւ զօրութիւն ունենալով աւելի լաւ կպաշտպանուի, սակայն առանց սորա եւս՝ որ եւիցէ մի ազգ՝ երբ առանձին Առաքելական Եկեղեցի Եւ առաքելական յաջորդութիւն Եւ ազգավարչութիւն ունի՝ վայելելով նաեւ ինքնուրոյն յատկութիւններ, այսինքն յառաջիւն գոյական կամաց առաջարկութեանց վերաբերեալ յատուկ սովորութիւնը Եւ տարազք, Եկեղեցական պաշտամանց՝ արարողութեանց՝ ծխաց՝ Եւ այլոց մէջ կարեւոր Եւ հիմնական իբրեւ ազգային յատուկ տարբերութիւնք Եւ խորութիւնք, անշուշտ առաւել ապահոված Եւ յարատեւութիւնը երաշխաւորեալ կրմնայ:

Երկրորդ նպատակի համար կրկնելոյ հարկ չկայ, որովհետեւ ինդիրն ինքնին պարզ է, Եւ Եկեղեցւոյ Եւ Ազգի օգուտ Եւ պէտքն կպահանջէ միշտ յարատեւութիւնը երաշխաւորեալ կրմնայ:

ռաջդիմական եւ բարեկարգութեան միջոցներ խորհել՝ հնարել եւ գործել ըստ պահանջմանց եւ կարեւորութեանց ժամանակին:

Ապաքէն ինչպէս մի ծառ ունի իւր ճիւղերը՝ որք պտուղ եւ նմին գեղեցկութիւն կտսն (անպատճ ծառերը ըլմուանամք, թէ եւ նոքա եւս ունին իւրեանց օգուտները եւ պէտքը), իսկ ծառը հաստատուն եւ ապահով կը մնայ իւր խոր արմատով՝ որեւ կունենայ բազում ճիւղեր որք առաւել եւս կապահովեն նորա հաստարմատութիւնը եւ տոկունութիւնը սոյնպէս նաեւ Աղջի եւ Եկեղեցւոյ գոյութիւնը եւ յարատեւութիւնը ապահովելոյ համար մեր արժանայիշատակ նախնիք եւ պաշտելի Հայրապետք ջանացին ամեն կարեւոր միջոցներ ձեռք առնուլ՝ եւ ունենալ մեր Աղջութեան եւ Եկեղեցւոյ վերաբերեալ նախնական եւ օգտակար աւանդութիւններ, սովորութիւններ, նուիրական կանոնք եւ օրէնք՝ ինչպէս նաեւ ժողովրդական ներքին կենցաղավարութեանց եւ շահուց նկատմամք առանձին եւ տարբեր յատկութիւններ, միանգամացն ինչպէս մեր Ա. Նախնիք ինքեանք կատարեցին, նոյնպէս քանիւ եւ արգեամք ուսուցին եւ աւանդեցին մեր աղջային եւ Եկեղեցական կանոնքը եւ օրէնքները պինդ պահպանել, ինչպէս նաեւ յաւէտ եւ միշտ ամենայն հարազատութեամք եւ ջերմեռանդ հաւատարմութեամք պահել եւ պաշտպանել այն ամենը՝ զորս ցարդ մեր Եկեղեցւոյ եւ Աղջի շուրջը մ' ոմի պարիսպ եւ բերդ ունենալով՝ անկարծանելի մը-

նացած եմք եւ կլայելեմք Հայաստանեայց Եկեղեցւոյ եւ Աղջի գոյութիւնը, միանգամացն նոքօք կպարծենամք:

Արդ՝ մեր արժանաւոր նախնիք՝ ինչպէս որ առանց նպատակի պահած եւ նուիրագործած չեն հին սովորութիւնները եւ աղջային՝ Եկեղեցական բաղմատեսակ աւանդութիւնքը եւլն՝ նոյնպէս մեզ կենդանի օրինակներավն յորդոր եւ պատուէր տուած են ինքեանց հետեւիլ ամեն բարի նպատակաց եւ գործոց մէջ ուրեմն եւ մեք պիտի կարողանամք քաջ հասկանալ եւ խելամրտիլ թէ՝ այն ամենն ոքքան կարեւոր եւ անհրաժեշտ են մեզ, նոցա օգուտները մեծ են, մանաւանդ ի ներկայս մեր ներքին եւ արտաքին օգուտներ կպահանջեն այնպիսի յատկութիւնք եւ նախնական բարի սովորութիւնք ոչ թէ միան միշտ ունենալ, այլ նաեւ եթէ կարելի է զայնս կարեւոր միջոցներով եւ փութով աւելի ամրացնել յօգուտ Աղջի եւ Եկեղեցւոյ մերոյ:

Երբէք ուրեմն ինչ օգուտ կակնկալեմք կրօնական զեղծմանց մէջ անտարբեր մնալով կամ մոլուելով, եւ թնջու չեմք հետեւիր կամ չպիտի հետեւիմք նկատել կրօնական զեղծմանց անհրաժեշտ եղած վտանգաբեր հետեւանքը՝ եթէ կսիրեմք Հայաստանեայց Եկեղեցին, Աղջիքը եւ նոցա ունեցած ամենայն պատական եւ պաշտելի աւանդութիւնքը եւ յատկութիւնքը Անջու չեմք նկատեր՝ զի յաւէտ անտարբեր մնալով այսօր՝ Եկեղեցւոյ մի արարողութեան նկատմամք, վաղիւ մի ծիսի նկատմամք, միւս օր՝ Աղջային կենսական յատ-

կութեանց նկատմամբ, մի ուրիշ օր՝
ազգային մասնագրութեան նկատ-
մամբ, եւ հետզհետէ ազգային լեզուի
Հայոց Նկեղեցւոյ Ազգութեան եւ այլոց
նկատմամբը*), եւ արդարեւ խելամուտ
կը լինիմք որ բատայտ ապա սպառնա-
կոց վտանգի կենթարկուխմք եւ անշնչառտ
միշտ պիտի ենթարկուխմք եթէ ըբա-
նամք մեր աչքերը եւ զգուշանամք բատ
արժանաւոյն:

Թող ամենայն Հայ՝ ուր որ լինի թէ
ի Հնդկաստան՝ ի Փարիզ՝ ի Մանչէսթըր
ի Նիւ-Եօրք եւ թէ ի Հայաստան՝ Հայ-
ըենի Երկրում լինի, Երբ ջերմեռանդ՝
Հաւատարիմ՝ նախանձախնդիր աւան-
դապահ եւ պաշտպան կլինի իւր Ազ-
գութեան՝ Նկեղեցւոյ՝ եւ կրօնական
— ազգային ամեն յատկութեանց մին-
չեւ ամենաճնչին կարծուած սովորու-
թիւնը, թող վատահ լինի՝ զի երբէք եւ
երբէք ոչ մի տեսակ վտանգ զմեզ հար-
ուածել չկարեն:

Ի Հարկէ՝ Նկեղեցւոյ եւ ազգի ա-
մեն կարգի եւ աստիճանի անդամներն
ի միասին պիտի զգան այս ամենը՝
եւ սիրով եւ միաբանութեամբ պիտի
արդիւնաւորեն, եւս աւելի Նկեղեցա-
կան պաշտօնեայք պարտաւոր են Հրո-
կել ամենի վերայ՝ ոչ մի տեղ չթող-

լով որպես գծումն ապրոփի, որպէս զի վը-
տանգալեր Հետեւանքներէն ապահով
մնան մեր պատուական Նկեղեցի եւ Ազգ-
ի հմուտ եւ ուսեալ՝ բարի եւ խոհեմ
եկեղեցականաց պակասութենէն կամ
հաղուագիւտ լինելէն չե՞ն յառաջանար՝
որ տեղ տեղ (ինչպէս ի Կալկաթա, ի
Մանչէսթըր, եւլն) մինչեւ անգամ Հա-
յաստանի գրիտւմ զեղծումներ կոր-
ծուին, որք վանդաբեր հետեւանքներ
կրօպառնան եթէ բոլորովին անտարբեր
մնամք, թող որ օտարագործիք մարդա-
մեքենաներ՝ չարակեզու եւ չարամիտ ան-
ձինք եւս պակաս չեն զեղծումներ յա-
ւելցնելոյ եւ չարագրգիտ մեքենայագոր-
ծութիւնքը նիւթելոյ համար բայց ժո-
ղովրդեան եւս գրեթէ համահաւասար
պարտքն է՝ եթէ կհասկանայ եւ ե-
ռանդ ունի՝ կուռ վառուած զինուիլ
օտարագործիք եւ վատաբարոյ անձանց
գէմ, եւ բարեմտութեամք ներգործել
եւ աջակցել Նկեղեցւոյ Վարչութեան,
եւ չթողուլ միանգամայն չներել՝ որ
կրօնական զեղծմամբք վտանգաբեր հե-
տեւանքներ յառաջանան եւ ծանրանան
Հայաստանեայց Նկեղեցւոյ եւ Ազգի վե-
րայ:

Վ Պ Ա Յ Ա Մ Ե Վ Ս Կ Ո Պ Ա Ս Մ Բ Վ Կ Ա Խ Ա Ն Տ Ի Վ Ա Ր Ա Ր Ե

(*) Այսպիսի զեղծմանց ծնունդ չե՞ն Ու և
Ա Ր Ա Ր Ե ևս ուր այսօր որբա ն կտագնապե-
ցնն զնզգ և Նկեղեցի Հայաստանհայք և քանի-
վիշտ և նախատինք կազզեն ողջամիտ Հայոց
զգայուն սրտից և այս ամենը արինանք և զիզէ
մանց խթաներ չե՞ն:

Ա Ր Ա Ր Ե Ա Ր Ա Ր Ե Ա Ր Ա Ր Ե Ա Ր Ա Ր Ե Ա Ր Ա Ր Ե